Ասան բէդ Սաֆիքիւրդսկին, հեծած առջևի թնդանօթը՝ յաղթական մուտք գործեց Գանձակ։

Յետագային յայտնի դարձաւ, որ այդ յարձակմանը անմասն չէին և վրացի վարիչներից ոմանք։ Յունւ. 6-ին Ն. Ռամիշվիլին զեկուցանում էր այդ մասին Անդրկ. Կոմխարհատի նիստին, թէ՝ «Անհրաժեշտ էր զինաթափել Ցարսկի Կոլոդցից մեկնած զօրամասը և զէնքը յանձնել վրացական կորպուսին։ Ուղարկուեց մի զրահապատ և մի զօրամաս... Բոլոր միջոցները ձեռք են առնուած»։ Իսկ Զուզելին մատնանշում էր «Աբխազաւայի և իր զօրամասի կատարած տխուր դերը։ Զինաթափում չէր այդ, այլ զինուորների թալան։ Դժբախտ ու տանջուած, իրենց տան կարօտը քաշող մարդկանցից խլում էին ամէն ինչ, անգամ կօշիկները։ Եւ հէնց տեղն ու տեղն էլ ծախում էին։ Աւազակախմբերը ծախում էին զէնքերը։ Ինչ որ դարչելի բան էր տեղի ունենում»։*)

Յունւ. 26-ին, Երկրային Կենտրոնում, նոյն Զուզելին յայտարարեց. «Իսկ ինչ վերաբերում է Շամքորի դէպքերին, ես յայտարարում եմ, որ ընկ. Նոյ Ռամիշվիլին որոշ կապ ունի նրանց հետ։ Միայն մի քանի օր այդ տխուր դէպքերից առաջ ընկ. Ռամիշվիլին, ինձ հետ ունեցած խօսակցութեան միջոցին, ասում էր, որ զինաթափութեան համար ամենայարմարը ինքը համարում է Աբխազաւայի զօրամասը։ Իմ ցուցմունքները, թէ Աբխազաւան այդ նպատակի համար պահանջած վարկը չունի, ըստ երեւոյթին, չօգնեցին, և մենք տեսնում ենք, որ Աբխազաւան իր զօրամասով ուղարկուել է այդ նպատակով։ Ըստ երեւոյթին, այդ ուղարկելը չի եղել առանց ընկ. Ռամիշվիլիի մասնակցութեան»։

Ռուս զօրքերի փախուստի հետեւանքով ամէն կողմից պահանջում էին հայկական զօրամասեր։ Պարզ էր դառնում, որ ճակատի պահպանութեան գործում այսուհետև առաջին տեղը բռնելու էին հայերը։ Կարո՞ղ էին նրանք կատարել այդ պատմական դերը։ Ի՞նչ վիճակ ունէին հայերը զինուորական տեսակէտից։

Դեռ հոկտեմբերեան յեղաշրջումից առաջ, Թիֆլիսի և Պետրոգրադի հայկական կազմակերպութիւնները հարց էին յարուցել, որ Ժամ. Կառավարութիւնը հրահանգէ արևմտեան ճակատի զօրամասերում գտնուող հայ զինուորներին փոխադրել կովկասեան ճակատ և կազմակերպել հայկական զօրամասեր։ Արեւմտեան ճակատում, այն ժամանակւայ հաշուով, կար շուրջ ութսուն հազար հայ զինուոր։ Այդ քանակութիւնը՝ միացած Կովկասում գտնուող դրեթէ նոյնչափ հայ զինուորների հետ, լաւ կազմակերպուած ու մարզուած, տուած հմուտ հրամանատարութեան ձեռքը, կարող էր վճռական դեր կատարել Թիւրքիայի դէմ։

Զինուորական նախարարն ու բարձր հրամանատարութիւնը ընդառաջ գնացին այս առաջարկութեան և կարգադրեցին հայ զինուորներին համախմբել Թիւրքական ռազմաբեմում, իսկ յուլիս 2 ու 11 հրամաններով Կովկասեան ճակատի գլխաւոր հրամանատարը արտօնեց հայկական հրացանա-

*) «Заря Востока», 1927г. янв. 8, № 6.